Այս լայն սրահը մեծամեծ պատուհաններ կը լուսաւորեն. յատակը՝ ինչպէս և եկեղեցւոյն՝ մեծ և տափարակ քարերով սալած է։ Սրահիս միջէն երեք մեծամեծ դռներով եկեղեցին կը մտցուի հարաւային դրան մօտ, պատին վրայ մարմարիոնի վրայ արձանագրութիւն մի կայ, որ է շիրիմ Ովանեսս Բարաղամեան անունով Երևանցի մեծ վաճառականին, որ վախճանած է ՌՃԿԶ թվ. (1717)։ Սրահին արևելեան պատին վրայ, հարաւային դրան անմիջապէս մօտ խորան մի շինուած է, որոյ պատկերը կը ներկայացընէ զծնօղս Ս. Աստուածածնի, Յովակիմ և Աննա, և 'ի միջի նոցա մանկահասակ Կոյսն Մարիամ. թէպէտ և յիշատակարան կամ թուական չգտայ պատկերին վրայ, այլ ամենահին է պատկերը, հայկական նկարչի գործ, հաւանական է որ Հայաստանէ բերուած լինի։ Ճակատի դրան վրայ, դէպ 'ի փողոց, գոգաձևի մէջ դրուած է պղնձաձոյլ ոսկեզօծ մարդաչափ մեծութեամբ Անարատ յղութեան կուսին արձանը, որ շատ վայելչագեղ է. իսկ վարով սիւներուն վրայ դրուած են երկուց հայրապետաց կիսանդրիք, որք անշուշտ կը ներկայացընեն զԼուսաւորիչ և զԱքանչելագործ հայրապետները, պաշտպանք եկեղեցւոյս. ինձ յարգի արձաններ չերևցան։

Եկեղեցւոյս մէջը ընդարձակ է. վեց խորան ունի. մեծավայելուչ է աւագը, որոյ խաչկալը թէպէտ փայտաշէն է, այլ այնպէս ճարտար ներկած՝ որ չի տարբերիր մարմարիոնէ։ Սեղանէն վեր՝ պատին մէջ գոգաձև շինուած է ոսկեզօծ, յորում դրուած է Հրաշագործ պատկերը, բազմաթիւ նուէրներով զարդարուած։ Գոգաձևէն վեր կայ Լուսաւորչի մեծ պատկեր մի՝ հայրապետական